

ԻՄ ԲՈՒԽԵՐԻՆԵՐ

* * *

Իմ բուխորիկն ես կը սիրեմ կաթոգին
 Իր որմերով սև ու մութ,
 Ուր կերտուած է ալապաստը իմ մարմինն՝
 Սափորն հոգւոյս լուսանիւթ:

Բաղեղներու հըմայքին մէջ գըրկապինդ
 Յուշերու տունն է կղպուած.
 Ոսկի բալլիքն ես սըրտիս մէջն եմ պահած
 Երբ դեռ լեզուս չէր բացուած:

Լուռ ամայի դաշտերուն մէջն էր ինկած
 Իբրև մոռցուած յիշատակ.
 Ուր նըրբահիւս ծուխ մը կ'ելլէր տարածուած
 Սընդուս վըրան մը բարակ:

Այդ պալատն էր իմ մանկական աշխարհին
 Դալար մամռով կերտուած,
 Կեանքն երազ էր ու նոր հէքեաթ սիրային,
 Վարդին ցօղովը գըրուած:

Շաղը կիշներ գիշերն յակինթ շըղարշով
 Ասողերու բոցը վըրան,
 Ու փափկասուն աղջամուղշին ծիւերով
 Բուխորիկս էր ոսկեման:

Արևն ամբողջ հոն կը լեցուէր ամէն օր
 Սիրականի զըզուանքով.
 Եւ շուշաններ, կարմիր վարդեր նորանոր
 Շարուած էին հիւզիս քով:

Խոկուն ծիտեր փըլատակուած երգիքին
 Նըստած էին քիւին տակ.
 Իմ պապերէս սորված այգուն մեղեդին
 Կը կրկնէին շարունակ:

Հացի շոգին բուխորիկիս ծերպերէն
 Մօրս շընչին հետ դուրս կ'ելլէր,
 Ու քըրմական կարծես կոշի դիւթանքէն
 Կ'երթար երկինքն աղօթկեր:

Բոյրն ես կը զգամ դեռ այդ հացին մէջն հոգւոյս,
 Մանանայի պէս անոյշ.
 Ճերմակ ու գիրգ կարծես խիւսն էր շաղուած լոյս,
 Մօրս մատներովը քընքոյշ:

Այդ հինաւուրց տունն է հոգւոյս ուխտավայր
 Լուռ խոկումով աղօթքի.
 Ու հին Նարեկ մ'էր իմ սրտիս սուրբ բուրվառ
 Նըկարին տակ Յիսուսի:

Երբ մարգերու վըրան կ'իշներ իրիկունն,
 Կ'աղօթէի ձեռնամած
 Իմ հայրիկիս ու մայրիկիս սիրասուն
 Երջանկութեան՝ առ Աստուած:

Ես կը յիշեմ աչքերն անոյշ մայրիկիս
 Բոլոր ժըպիս, բոլոր սէր.
 Կարծես լըճին այդ խորն ինկած իմ հոգիս
 Կախարդանքի մէջ կ'ապրէր:

Հայրիկս ալ հոն պաշտամունքի ակնարկով
 Ինձ կը ձըզէր բազուկներն.
 Ու գըրկէ գիրկ կը վազէի տենչանքով,
 Ընդունելու համբոյրներն:

Կը հանգչէի օճախին քով ճարճատուն
 Մօրս գըրկին մէջ լուռ քընած,
 Մինչ ծիւրանի ցուքն ածուխին ոսկեզոյն
 Մերկ անդամներս էր ծածկած:

Նիրհած գիշեր, նինջն էր երազ մանկական,
 Լուսընկայի աղօթքով.
 Դիւթում հիւզակ, սըրինգներով հովուական,
 Դալարին մէջ անխըռով:

Ծըխէ՛, ծըխէ՛ ով բուխորիկ հայրենի
 Կարօտանքիս այրումով.
 Ես հեռու եմ, բայց ծուխդ հոգւոյս կը հասնի
 Իմ սարերուս հովերով:

Ո՛րքան անոյշ, աղօթքի պէս մեղրածոր
 Բարբառ մ'ունիս ինձ համար,
 Երբ կը պատմես իմ պապերէս հեռաւոր
 Յիշատակներ անհամար:

Թէպէտ որմերդ են հընամաշ օեաթոյր
 Դուն ալ ունիս սիրողներ.
 Թէ բիւր մահեր աչքիս քաշեն վարագոյր
 Ես դեռ ունիմ տեսիլներ:

Միլամ

9 Դեկ. 1926

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵՍԻԱՆ